ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծի վերաբերյալ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	5
1.	**ՀՀ Կառավարություն**	154-րդ հոդված	Առաջարկվում է սահմանել, որ դատարանը գործի քննությունը հետաձգելու մասին կայացնում է պատճառաբանված որոշում:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	**ՀՀ Կառավարություն**	295-րդ հոդված	1. Առաջարկվում է 2-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. Առաջին ատյանի դատարանը կարող է պարզեցված վարույթի կարգով քննել նաև այլ գործեր, եթե առկա է գործին մասնակցող բոլոր անձանց միջև կնքված՝ գործը պարզեցված վարույթի կարգով	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			քննելու վերաբերյալ գրավոր համաձայնություն, և հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետում գործին մասնակցող որևէ անձ չի առարկել գործը պարզեցված վարույթի կարգով քննելու դեմ:		
			Առաջարկվում է որպես պարզեցված վարույթի կարգով գործը չքննելու հիմք նախատեսել նաև ոչ պատշաճ կողմի փոխարինման անհրաժեշտությունը:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
		298-րդ հոդված	Առաջարկվում է 2-րդ մասում «սահմանված» բառից հետո լրացնել «իսկ դատարանի կողմից այդ ժամկետը երկարաձգվելու դեպքում՝ երկարաձգված» բառերը:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: